

ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՄՈՒԻՆ ԵՐԵՄՅԱՆ

Բանկային ռիսկերի կառավարումը դրանց նվազեցմանն ուղղված համալիր գործողությունների համակարգ է, որը ներառում է ռիսկերի կանխատեսում, ծագման հնարավոր աղբյուրների բացահայտում, մակարդակի թույլատրելիության գնահատում, հետևանքների որոշում, կորուստների նվազեցման և/կամ կանխարգելմանն ուղղված քայլերի իրագործում: Բանկային գործունեության կարգավորման մեջ ռիսկերի նշանակությունը հետազոտողները նկատել են դեռևս 18-19-րդ դարերում¹: Ռուսաստանի ֆինանսների նախարար Ն.Խ. Բունցեն (1881-86), անդրադառնալով այդ հարցին, նշել է, որ վարկային պարտավորությունների կատարման հանդեպ անհրաժեշտ ազնվությունն ու պարկեշտությունը մեծ ազդեցություն ունեն բանկային ռիսկի նվազեցման առումով²: Յուրաքանչյուր բանկ ունի իր գործունեությանը բնորոշ ուժեղ և թույլ ընդգծված ռիսկեր և գործում է այդ ռիսկերը զսպելու նկատառումով: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ գոյություն չունի բանկային ռիսկերի կառավարման այնպիսի օրինակելի համակարգ, որով առաջնորդվեն բոլոր բանկերը: Բնականաբար, բանկերը պետք է կառավարեն ռիսկերն այնպես, որ երկարաժամկետ հատվածում չխափանվի իրենց բնականոն գործունեությունը՝ միաժամանակ շուկայում ապահովելով ամուր անցակցային դիրքեր և առավելագույն շահույթ:

Թեև ռիսկերը հատուկ են բոլոր բանկերին, այնուամենայնիվ, յուրաքանչյուր բանկ առանձնանում է իրեն բնորոշ ռիսկերի համակարգով՝ պայմանավորված հիմնական գործունեության ոլորտով: Իր գործունեությունն իրականացնելիս բանկը պետք է ստանձնի միայն այնպիսի ռիսկեր, որոնք հետագայում ի վիճակի կլինի ճիշտ գնահատելու և արդյունավետ կառավարելու: Ռիսկերի կառավարման ռազմավարությունը պետք է այնպես մշակել, որ ժամանակին և հետևողականորեն օգտագործվեն բանկի զարգացման բոլոր հնարավորությունները՝ միաժամանակ պահպանելով ռիսկի թույլատրելի և կառավարելի մակարդակը:

Վերջին տարիների ճգնաժամը բանկերին ստիպեց մշակել ռիսկերի կառավարման նորանոր արդյունավետ մեթոդներ և գործիքներ: Ժամանակի ընթացքում կատարելագործվում են տեխնոլոգիաները, ի հայտ են գալիս ռիսկերի առավելագույնս ճիշտ գնահատման և արդյունավետ կառավարման նոր մեթոդներ և մոտեցումներ: Ռիսկերի վերահսկման և կառավարման կարողությունը յուրաքանչյուր բանկի երկարատև հաջողության գրավականն է, ուստի պետք է հաճախակի վերլուծել ու գնահատել ռիսկերի կառավարման արդյունավետությունը և ներդնել նոր, ժամանակի պահանջ-

¹ St'u Банковские риски / под редакцией Лаврушина О.И. и Валенцевой Н.И./, М., 2007:

² St'u **Буре Н.**, Теория кредита. Киев, 1852, էջ 39:

ներին համահունչ մեթոդներ՝ օգտագործելով գիտատեխնիկական նորություններ, արդի տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն: Անկախ կառավարման ձևից՝ յուրաքանչյուր ծրագիր պետք է ներառի ռիսկի՝

- բացահայտում,
- գնահատում,
- վերահսկողություն,
- դիտորդում (մոնիտորինգ):

Ռազմավարական ուղղության հիմնական բաղադրիչներից մեկը ռիսկի հանդուրժելիության ընդունումն է՝ գրավոր կամ բանավոր չափանիշների հավաքածուի միջոցով: Լավ մշակված դիտարկումային համակարգերը խորհրդին հնարավորություն են ընձեռում հետևելու, թե արդյո՞ք բանկի ղեկավարությունը գործում է սահմանված հանդուրժողության տիրույթում: Փորձառու ղեկավարությունը և համապատասխան որակավորում ունեցող աշխատակազմը նույնպես վճռորոշ դեր ունեն ռիսկի արդյունավետ կառավարման գործում: Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ռիսկի կառավարման համակարգերի գործարկման, ամբողջականության և պահպանման համար: Դրանք գնահատելիս կարևոր է հաշվի առնել բանկի քաղաքականությունը, գործընթացները, աշխատակազմը և վերահսկողական համակարգերը: Այս բաղադրիչներից որևէ մեկում առկա էական թերությունը կարող է կառավարման ամբողջ համակարգի անկատարության պատճառը լինել:

Բանկային ռիսկի կառավարման սկզբունքների վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր, մեթոդական ուղեցույցներ են հրատարակվել, որոնք հեղինակել են տարբեր վերահսկողներ, մասնավոր ընկերություններ, ակադեմիաներ և միջազգային կազմակերպություններ, ինչպես օրինակ՝ բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեն: Կենտրոնական բանկը նույնպես, հրատարակելով մեթոդական ուղեցույց, իր տեսչական վերահսկողության մարմինների միջոցով ձեռնարկում է յուրաքանչյուր բանկի ռիսկերի կառավարման արդյունավետության ստուգման միջոցառումներ, և ԿԲ պահանջներին որևէ անհամապատասխանություն դիտվում է որպես անապահով ու անկայուն գործունեություն, որի պատճառով բանկը կարող է ենթարկվել տուգանքների:

Քանի որ շուկայական պայմանները և կազմակերպությունների կառուցվածքները տարբեր են, ուստի ռիսկերի կառավարման միասնական համակարգ գոյություն չունի: Յուրաքանչյուր բանկ, ըստ իրավիճակի և իր կարիքների, պետք է մշակի ռիսկերի կառավարման սեփական ծրագիրը: Ռիսկի կառավարման համակարգի բարդությունը կաճի, օրինակ՝ պայմանավորված բանկի չափերով, գործառնությունների բազմազանությամբ և աշխարհագրության ընդլայնմամբ: Տարբեր են նաև ռիսկերի կառավարման կազմակերպման ձևերը. բանկն ինքն է որոշում՝ ռիսկերի կառավարումը բաշխել ստորաբաժանումների՞ միջև, թե՞ ստեղծել առանձին միավոր, որը կիրականացնի կենտրոնացված կառավարում:

Բանկերը հիմնականում նախընտրում են ռիսկերի կառավարման առաջին տարբերակը, քանի որ խուսափում են լրացուցիչ ծախսեր կատարելուց, սակայն, անկասկած, ռիսկերի համակարգված կառավարման արդ-

յունավետությունն առավել է, ուստի համապատասխան մարմնի ստեղծման և գործարկման ծախսերն էլ լիովին արդարացված են:

Կայուն գործունեություն ապահովելու համար չափազանց կարևոր է ռիսկերի կառավարման լիազոր մարմնի ստեղծումը, որը կունենա որոշակի գործառույթներ և զինված կլինի նյութական, ֆինանսական, աշխատանքային ու տեղեկատվական ռեսուրսներով: Նման կառույցի ձևավորման համար բանկերը պետք է վերակազմավորեն կառավարման կառուցվածքը և ստեղծեն այնպիսի ստորաբաժանում, որը կկարողանա կատարել ռիսկերի համակարգված վերլուծություն, խորացված ուսումնասիրություն և կարճաժամկետ կանխատեսումներ, կառուցվածքային փոփոխություններին համապատասխան վերակառուցեն սեփական գործունեությունը, ապահովեն անհրաժեշտ գործընթացի տեղեկատվական-վերլուծական կարգավորում և սպասարկում:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի դերը մեծ է բանկային ռիսկերի կառավարման կատարելագործման առումով: Մասնավորապես՝ բանկային ռիսկերի զսպման տեսանկյունից շատ կարևոր է Բազել 1-ից բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի նոր համաձայնագրին անցումը, որը հայտնի է որպես Բազել 2: Վերջինս բաղկացած է հետևյալ մասերից³.

- կապիտալի համարժեքության նկատմամբ նվազագույն պահանջներ,
- բանկային վերահսկողություն,
- տեղեկատվության հասանելիություն և շուկայական կարգապահություն:

Ըստ Բազելյան կոմիտեի՝ Բազել 2-ի կիրառումը կնպաստի բանկերում ռիսկերի կառավարման առավել հուսալի համակարգի ներդրմանը:

Նոր համաձայնագրում պահպանվում է կապիտալի համարժեքության նկատմամբ նախորդում սահմանված պահանջը. ընդհանուր կապիտալը պետք է լինի ռիսկով կշռված ակտիվների առնվազն 8%-ը, սակայն փոփոխվում է դրանց հաշվարկման կարգը: Այս դեպքում, որպես հիմնական նորամուծություն, հանդես է գալիս բանկային ռիսկերի ներբանկային գնահատականների՝ իբրև կապիտալի հաշվարկման տարրերի ավելի ակտիվ օգտագործումը:

Ի տարբերություն նախորդ համաձայնագրի՝ կապիտալի համարժեքության հաշվարկման ժամանակ, բացի վարկային ռիսկից, այստեղ հաշվի է առնվում նաև գործառնական ռիսկը, իսկ արտարժույթայինը ներառվում է շուկայականի հաշվարկում: Ընդ որում՝ առաջարկվում են ռիսկերի հաշվարկման տարբեր եղանակներ, որոնցից յուրաքանչյուր երկիր կարող է ընտրել իր համար առավել նպատակահարմարը:

Նոր համաձայնագրով Բազելյան կոմիտեն նաև կոչ է անում ավելի մեծ ուշադրություն դարձնել ինչպես բուն վերահսկողության գործընթացին, այնպես էլ շուկայական կարգապահությանը:

³ Տե՛ս **Բ. Ասատրյան**, Բանկային գործ, Եր., 2003, www.cba.am

Ըստ այդմ՝ վերահսկող մարմինները պետք է գնահատեն կապիտալի նկատմամբ նվազագույն պահանջների որոշման բանկերի ունակությունները՝ հաշվի առնելով բնորոշ ռիսկերը (վարկային, շուկայական, գործառնական), անհրաժեշտության դեպքում միջամտեն այդ գործընթացին: Վերահսկողությունն այս պարագայում ենթադրում է նաև սերտ համագործակցություն բանկերի և վերահսկող մարմինների միջև, ինչը, թերությունների ի հայտ գալու դեպքում, թույլ կտա արագ և արդյունավետ որոշումներ կայացնել ռիսկերի նվազեցման կամ կապիտալի համարման ուղղությամբ:

Շուկայական կարգապահությունը ժամանակակից ֆինանսական կարգավորման կարևոր բաղադրիչներից է, որը բաժնետերերին և հնարավոր ներդրողներին առավել ընդգրկում ու բազմակողմանի տեղեկատվություն է նախատեսում: Դա հնարավորություն կտա հստակ կողմնորոշվելու և գնահատելու ֆինանսական հաստատությունների գործունեությունը:

Ռիսկերի կառավարումը առաջնային կարևորության խնդիր է, քանի որ, անկախ բանկի ծավալներից, այս ոլորտում թույլ տրված սխալները կարող են ճակատագրական լինել բանկի հետագա գործունեության համար: Թեև բոլոր երկրներում վերահսկող մարմինները ռիսկերի սահմանափակման նպատակով կարգավորում են ոլորտի գործունեությունը, այդուհանդերձ, դրանց կառավարման պատասխանատվությունն, ի վերջո, ընկնում է իրենց՝ առևտրային բանկերի վրա:

ՀՀ առևտրային բանկերի ակտիվային գործառնությունների մեծ մասը բաժին է ընկնում վարկային ոլորտին, ուստի հատկապես կարևորվում է վարկային ռիսկի գնահատման մեթոդների ճիշտ ընտրությունը և արդյունավետ կառավարումը: Վարկային ռիսկի գնահատման ժամանակ, ի թիվս այլ գործոնների, անհրաժեշտ է հաշվի առնել նաև վարկային պորտֆելի որակը, խնդրահարույց վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր փաթեթում:

Դիտարկելով 2009 թ. առաջին եռամսյակում ՀՀ ֆինանսական շուկայում սկիզբ առած ցնցումները՝ վստահաբար կարելի է նշել, որ առևտրային բանկերում ճիշտ չէին ընտրված արտարժութային ռիսկի կառավարման մեխանիզմները: Մասնավորապես՝ հաշվի չէին առնված տեղական շուկայի սահմանափակ բնույթը և առանձնահատկությունները, ինչպես նաև արտաքին գործոնների նկատմամբ բարձր զգայունությունը, ինչի հետևանքով մեր երկրի բանկային համակարգն այդ ժամանակահատվածում արտարժույթի վերագնահատումից կրեց միլիոնավոր դոլարների վնաս: Այսօր էլ արտարժույթի փոխարժեքի տատանումներն անկանխատեսելի են, իսկ ազգային արժույթի արժեզրկման (դևալվացիա) սպասումները պատճառ են դառնում սպեկուլյատիվ բնույթի գործողությունների ֆինանսական համակարգի օրինական և ստվերային մասնակիցների միջև: Վերը նշված սպասումների դրսևորումներից մեկն էլ բնակչության և տնային տնտեսությունների՝ բանկերում պահվող խնայողությունների կտրուկ նվազումն է, ընդ որում՝ արտահոսքի ծավալում գերակշիռ մասը ազգային արժույթով արտահայտված միջոցներն են: Նշենք նաև, որ շատերը նախընտրում են իրենց դրամային խնայողությունները վերածել արտարժույթային, ինչի հետևանքով աճում են բանկերի արտարժույթային պարտավորությունները:

Համապատասխան ռիսկից խուսափելու համար բանկերը փորձում են հնարավորինս փակ պահել իրենց արտարժութային դիրքերը՝ ակտիվային գործառնությունների ծավալում մեծացնելով արտարժութային գործարքների տեսակարար կշիռը:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը երիտասարդ կառույց է, որը բավարար չափով ինտեգրված չէ միջազգային ֆինանսական համակարգին: Անշուշտ, միջազգային ֆինանսական համակարգին միասնացումը կվկայեր համակարգի զարգացածության մասին, սակայն ներկայիս պայմաններում միջազգային ֆինանսական համակարգին ինտեգրված չլինելը դրական դեր խաղաց, քանի որ արժեթղթերի շուկայի ցնցումները որևէ անդրադարձ չունեցան ՀՀ-ում: Ընդգծենք նաև, որ մեր երկրում բավարար չափով չեն ներդրված նոր ֆինանսական գործիքներ. առևտրային բանկերի գործառնությունների գերակշիռ մասը բաժին է ընկնում դասական բանկային ծառայություններին՝ ավանդների ներգրավում, վարկավորում, վճարահաշվարկային համակարգերով փոխանցումների իրականացում:

СУРЕН ЕРЕМЯН — Система управления банковскими рисками.-

Предметом исследования является значение эффективного управления банковскими рисками. Определенное внимание было обращено на объекты и субъекты, этапы, аспекты управления банковскими рисками, и.т.д.

Для обеспечения эффективности управления банковскими рисками в качестве приоритетных задач обосновываются правильный выбор и реализация банковской политики, а также оценка всех видов риска.

SUREN EREMYAN — The System of Bank Risk Management.- The subject of the study is the significance of efficient management of bank risks. Particular attention has been paid to the objects, subjects, stages, aspects of bank risk management etc. Adoption and implementation of the right banking policy as well as assessment of all the bank risks have been outlined as priorities to ensure effective bank risk management.